



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

5 հոկտեմբերի 2011թ. թիվ 285-Ա

**ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆՆԵՐԻ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.5 կետի «ժ» ենթակետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

ՀՀ Լոռու մարզպետարանում քաղաքացիներին տեղեկատվության տրամադրման և մատչելիության, ՀՀ Լոռու մարզպետի կողմից նրանց ընդունելությունը կանոնակարգելու նպատակով՝

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Քաղաքացիների ընդունելությունն իրականացնել տվյալ քաղաքացու՝ մարզպետարանի աշխատակազմի քարտուղարությունում գրանցվելուց հետո:

3. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝

Մարզային ԶԼՄ-ներով և մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքով հանրությանը պարբերաբար տեղեկացնել մարզպետարանում կազմակերպվող քաղաքացիների ընդունելությունների մասին:

4. Մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝

Ապահովել Մարզպետի մոտ ընդունելության գրանցված քաղաքացիների ցուցակների և ընդունելության արդյունքների վերլուծության (եռամսյակային կտրվածքով) տեղադրումը մարզպետարանի պաշտոնական կայքում:

5. Մույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ա.Մանուկյանի վրա:

6. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2009թ. մարտի 25-ի «ՀՀ Լոռու մարզպետարանում քաղաքացիների ընդունելության կազմակերպման մասին» թիվ 84-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ  
2011թ. հոկտեմբերի 5  
ք.Վանաձոր

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ